ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.
Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3 84 62, 3 78 97 ,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-59/17
22 փետրվար 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու թիվ 07-Ա, 08-Ն,

09-Ա և 10-Ա որոշումները:

Առդիր 9 թերթ:

X_____

Համայնքի ղեկավար՝ **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 07-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2017թ-ի փետրվարի 17-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2017թ-ի փետրվարի 17-ի թիվ 02 նիստի

1. Շահումյան համայնքի 2016թ-ի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
2. Հողի հարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ավելի բարձր դասային աստիճան ունեցող ծառայողների համար հավելավճարի չափը սահմանելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 08-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավականակտերիմասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 56-րդհոդվածի 2-րդմասով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շահումյան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել 2016 թվականի Շահումյան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴՈՒԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1

Շահումյան համայնքի ավագանու

2017 թ-ի փետրվարի 17-ի թիվ 08-Ն որոշման

Շահումյան համայնքի 2016թ. Տարեկան հաշվետվություն

Շահումյան համայնքի 2016թ. Բյուջեն կատարվել է.

ա) եկամուտների գծով ՝ 99 %- ով 66075.7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 65440.1 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ եկամուտները ավել է կատարվել 5105.5 հազար դրամով կամ 108.5 %-ով:

- Սեփական եկամուտները (բացի տրանսվերտներից և պատվիրակված լիազորություններից) նախատեսված 8186.1 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 7550.5 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 92.2 % - ով: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 616.0 հազար դրամով:

- Պաշտոնական դրամաշնորհների գծով (Համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա և այլ դոտացիա) նախատեսված 54889.6 հազար դրամի դիմաց կազմել են 54889.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 %:

- Վարչական բյուջեի Տարեսկզբի մնացորդը կազմել է 2805.0 հազա դրամ:

- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 116.3 հազ.դրամ:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը ՝ 2805 հազար դրամ, ամբողջությամբ ուղղվել են 2016թ.-ի ֆոնդային բյուջեի ծախսերի իրականացման համար:

Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները նախատեսված 2206.9 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1979.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 89.7%: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 801.7 հազար դրամ կամ կատարվել է 71.2%-ով:

Գույքահարկ

(փոխադրամիջոց և շինություն)

Գույքահարկի գծով եկամուտները նախատեսված 4173.4 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 4093.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98.1%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 905.2 հազար դրամ կամ կատարվել է 126.6-ով%:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերը նախատեսված 185 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել են 151.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 82 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 18.8 հազար դրամ կամ 89%-ով:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճար

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարը նախատեսված 1310.8 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 935.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 71.4 %: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է գանձվել 560.8 հազար դրամ կամ կատարվել է 62.5%-ով:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտ է հանդիսացել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 2921.3 հազ.դրամը և պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) 3000.0 հազ.դրամ, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում չունենք:

Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտը կազմել է 5921.3 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը նախատեսված 63075.7 հազար դրամի դիմաց կատարվել է 61411.7 հազար դրամ, կամ 97.4%-ով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	35113.0	հազ. դրամ
- Գյուղատնտեսություն	500.0	հազ.դրամ
Որից՝ գյուղ.տեխնիկայի պահեստամաս և վառելիք	0.0	հազ. դրամ
ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	500.0	հազ. դրամ
Ճանապարհի ընթացիկ նորոգում	2999.9	հազ.դրամ
Աղբահանում	654.7	հազ.դրամ

Սելավատարների մաքրում	900.0 հազ.դրամ
Ջրամատակարարում	400.0 հազ.դրամ
Փողոցների լուսավորում	1149.1 հազ.դրամ
Կրթամարզամշակութային համալիր	12500.0 հազ.դրամ
Մշակույթային միջոցառումներ	1380.0 հազ.դրամ
Հասարակական կազմակերպություններին	30.0 հազ.դրամ
Առաջին և 10-րդ դասարանցիներին	1100.0 հազ.դրամ
Հարազատին կորցրած ընտանիքներին	285.0 հազ.դրամ
Նորածիններին	405.0 հազ.դրամ
Անապահով ընտանիքների օգնություն	3995.0 հազ. դրամ

Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեի գծով ծախսեր կատարվել է	5853.1 հազ. դրամ:
Որից՝	
Վարչական սարքավորումների ձեքբերում	784.5 հազ.դրամ:
Կապիտալ վերանորոգման գծով ծախսեր	4688.6 հազ.դրամ;
Նախագծային աշխատանքներ	380.0 հազ.դրամ;

Բյուջեի կատարման արդյունքում ծախսերի գծով պարտքեր չեն գոյացել:

Շահումյան համայնքի ղեկավար Է. Մանուկյան

Հավել...
Շահումյան համայնքի ավագանու
2017 թ-ի փետրվարի 17-ի թիվ 08-Ն որոշման

Տեղեկատվություն

Շահումյան համայնքի 2015թ.-2016թ. բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

...կամուտների անվանումը	2015թ. տարեկան պլան	2015թ. փաստացի կատարողական	2015թ. կատարման %-ը	2016թ. տարեկան պլան	2016թ. փաստացի կատարողական	2016թ. կատարման %-ը	2016թ.-ի փաստացի գանձումը 2015թ.-ի համեմատությամբ (հազար դրամ)	2016թ.-ի փաստացի կատարողականի համեմատությունը 2015թ.-ի նկատմամբ (%)
...ի հարկ համայնքների վարչական ...րածքներում գտնվող հողի համար	3742.1	2781.0	74.3	2206.9	1979.3	89.7	-801.7	71.2
...յքահարկ համայնքների ...րչական տարածքներում գտնվող ...քերի և շինությունների համար	1016.2	1115.3	109.8	1121.1	1050.8	93.7	-64.6	94.2
...յքահարկ փոխադրամիջոցների ...մար	2400.6	2119.0	88.3	3052.3	3043.0	99.7	924.0	143.6
...եղական տուրքեր	185.0	170.5	92.2	185.0	151.7	82.0	-18.8	89.0
...մայնքի սեփականություն ...մարվող հողերի վարձավճարներ	1234.0	1496.5	121.3	1310.8	935.7	71.4	-560.8	62.5
...ական վճարներ	0.0	183.7		0.0	108.2	0.0	-75.5	58.9
...մայնքի վարչական տարածքում ...նակամ կառուցված շենքերի, ...ությունների օրինականացման ...մար վճարներ	100.0	67.1	67.1	100.0	0.0	0.0	-67.1	0.0
... եկամուտներ	210.0	233.9	111.3	210.0	281.8	134.2	47.9	120.5
...ամենը սեփական եկամուտ	**8887.9**	**8166.5**	**91.9**	**8186.1**	**7550.5**	**92.2**	**-616.0**	**92.5**
...ետական բյուջեից ֆինանսական ...մահարթեցման սկզբունքով ...մադրվող դոտացիաներ	52032.4	52032.4	100.0	54597.9	54597.9	100.0	2565.5	104.9
...ետական բյուջեից համայնքի ...չական բյուջեին տրամադրվող այլ ...ացիաներ	135.7	135.7	100.0	291.7	291.7	100.0	156.0	215.0
...ամենը եկամուտներ	**61056.0**	**60334.6**	**98.8**	**66075.7**	**65440.1**	**99.0**	**5105.5**	**108.5**

Շահումյան համայնքի ղեկավար` Է. Սամուելյան

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2017 թ-ի փետրվարի 17-ի թիվ 08-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահումյան համայնքի 2013-2016թթ. սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված թվով 9 առաջնահերթ խնդիրները (ծրագրերը) իրականացվել են հետևյալ կերպ.

1. Մարզամշակութային համալիրի համար գույքի և համապատասխան պարագաների ձեռքբերում- իրականացվել է լիովին:
2. Գյուղատնտեսության զարգացում – ընթացքի մեջ է: Համայնքում կոպերատիվի ստեղծման աշխատանքներն ընթացքի մեջ են, ձեռք կբերվի գյուղ. տեխնիկա և կիրականացվի դաշտամիջյան ճանապարհների նորոգում:
3. Նոր գերեզմանատան ճանապարհի բարեկարգում – համայնքի բյուջեի սղության պատճառով ծրագիրը չի իրականացվել, սակայն ընդգրկվել է 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում:
4. Սպորտի դահլիճի և հանդերձարանի վերանորոգում, եվրոպատուհանների տեղադրում, ջեռուցման ապահովում – ծրագիրը լիովին իրականացվել է:
5. Կանգառների կառուցում – լիովին իրականացվել է, համայնքի բյուջեով կառուցվել է թվով 5 կանգառ:
6. Ներհամայնքային, միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում – իրականացվել է մասամբ, համայնքի բյուջեով պարբերաբար կատարվում են համայնքի ճանապարհների ընթացիկ նորոգման՝ փոսալցման և հարթեցման աշխատանքներ: Բյուջեով հնարավոր չէ իրականացնել կապիտալ նորոգման աշխատանքներ, խնդիրն ընդգրկվել է հնգամյա ծրագրում և նախատեսվում է իրականցնել անհրաժեշտ ռեսուսներ հայթայթելու դեպքում:
7. Եկեղեցու շինարարական աշխատանքների ավարտում և շրջակա տարածքի բարեկարգում – իրականացվել է լիովին, համայնքում 2013թ-ից գործում է Սբ. Հակոբ եկեղեցին, որը 2016թ-ից նվիրաբերվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:
8. Գերեզմանատան ցանկապատում և սողանքների վերացում – իրականացվել է լիովին, սակայն 2016թ-ի հունիսի 23-ին տեղացած հորդառատ անձրևներից գերեզմանատան տարածքում սողանքի հետևանքով առաջացել է փլուզում, որը վնասել է ցանկապատի մի մասը: Նշված խնդիրն ընդգրկվել է հնգամյա ծրագրում:
9. Սելավատարի և հեղեղատարի կառուցման և մաքրման աշխատանքներ – իրականացվել է լիովին:

Շահումյան համայնքի ղեկավար՝ Է. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 09-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 21.03.2012թ-ի ,,Հողի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին,,Հայաստանի Հանրապետության օենքի 1-ին հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Շահումյան համայնքի ներքոնշյալ բնակիչների դիմումները, Շահումյանի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի ,,Շահումյան համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամների նկատմամբ հողի հակի արտոնություն սահմանելու մասին,, և ,,Արցախյան պատերազմին մասնակցած կամավորների նկատմամբ հողի հարկի արտոնություն սահմանելու մասին,, զեկուցագրերը՝ Շահումյան համայնքի ավագանին. **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**

Շահումյան համայնքի ներքոհիշյալ բնակիչներին ազատել հողի հարկի գծով հարկային պարտավորություններից.

1. Զոհված ազատամարտիկների ընտանիքներ.

1) Մամյան Արսեն - 27901 /քսանյոթ հազար ինը հարյուր մեկ/ դրամ:
2) Ավանեսյան Արամայիս - 13282 /տասներեք հազար երկու հարյուր ութսուներկու/ դրամ:
3) Աղբալյան Օֆելյա - 11039/տասնմեկ հազար երեսունինը/ դրամ:
4) Մամյան Լամարա - 7374 /յոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս/ դրամ:

2. Արցախյան պատերազմին մասնակցած, սոցիալապես անապահով կամավորներ.

1) Բարսեղյան Յուրա - 11207 /տասնմեկ հազար երկու հարյուր յոթ/ դրամ:
2) Չավուշյան Սեյրան - 12256 /տասներկու հազար երկու հարյուր հիսունվեց/ դրամ:
3) Խաչիկյան Արամայիս - 50000 /հիսուն հազար/ դրամ:

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներ.

1) Զոհրանյան Հենրիկ - 12820 /տասներկու հազար ութ հարյուր քսան/ դրամ:
2) Քոսյան Հրանտ - 2836 /երկու հազար ութ հարյուր երեսունվեց/ դրամ:
3) Աղբալյան Արթուր - 17331 /տասնյոթ հազար երեք հարյուր երեսունմեկ/ դրամ:
4) Հովհաննիսյան Յակով - 5421 /հինգ հազար չորս հարյուր քսանմեկ/ դրամ:
5) Սահակյան Զարմայիլ - 48000 /քառասունութ հազար/ դրամ:
6) Դալլաքյան Սուրեն - 50000 /հիսուն հազար/ դրամ:
7) Սահակյան Կարեն - 53300 /հիսուներեք հազար երեք հարյուր/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍԻՏՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 3 -րդ մասի 3.1 կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ, իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար, սահմանել հավելավճար՝ տվյալ պաշտոնի համար համայնքի ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափի 5 % -ի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ